հիմնավորումը,ինչպես նաև համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանված այլ նյութեր:

9.Հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք համայնքի ավագանու նստավայրում,ինչպես նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները,որոնք կարող են թողնվել համացանցային կայքում հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով,ինչպես նաև կարող են գրավոր ներկայացվել համայնքի գյուղապետարան:Եթե առաջարկությունները և (կամ) դիտողությունները ուղարկվել են էլեկտրոնային հասցեով,ապա համայնքի գյուղապետարանն անմիջապես ,բայց ոչ ուշ ,քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում,հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան դիտողությունները և (կամ) առաջարկություններն ստանալու մասին:

10. Հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով հանրային քննարկումների հրավերը հրապարակելուց առնվազն տասներկու օր հետո համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ հանրային քննարկումները կարող են իրականացվել նաև հանրային կամ շահագրգիռ անձանց հետ հանդիպումների ,բաց լսումների , քննարկումների , ինչպես նաև հեռահաղորդակցության հնարավոր միջոցներով:Լսումների անցկացումը պարտադիր է համայնքի զարգացման քառամյա ծրագրի ,ինչպես նաև տարեկան բյուջեի նախագծերի քննարկման դեպքում:
Տվյալ դեպքերում համայնքի գյուղապետարանի ներկայացուցիչը նախապես նշանակված ժամին բացում է քննարկումները,ներկայացնում է համապատասխան նախագծի համառոտ նկարագիրը,քննարկման հարցերի շրջանակը , համայնքի գյուղապետարանի ներկայացուցիչ հանդիսացող հանրային քննարկումների քարտուղարին ,ինչպես նաև մասնակիցներին տրամադրում է համապատասխան նյութեր քննարկումների վերաբերյալ,որոնք մինչ այդ հրապարակված չէին եղել նախագիծը մշակող մարմնի համացանցային կայքում: Քննարկումների քարտուղարը պետք է կազմի քննարկումների վերաբերյալ գրավոր